

Nukligruph neqash

825

PAK-41

"ԱՐԵՏԱԿԵՐՊԻ ՄԱՍՆԵՐԵՐԻ

Հեղինակ՝

ՑՈՒՐԸՆ Ա. Ա.

ԱՍԿԵԳԵՏԻ ԹԱԳԱՌՈՒՐ  
4 Ա ՏՕՐՈՆՏՈ

ԱՐ ԵՂԲԱՅՐՆԵՐ



Բարեխայիս և Ռայկելիք թագաւորը

Կ. ՊՈԼԻՍ

Տպարան՝ Ա. Խ. Մ. Յ. Յ. ՔԵՐԵՇԵՎ. 1912

825

Բ-41

PUBLISHED IN,  
Constantinople, Turkey.

12104




825  
n-41

30 MAY 2011

## ԱՍԿԵԳԵՏՏԻ ԹԱԳԱՒՈՐԸ

4 5 5

ՍԵՒ ԵՂԲԱՅՐՆԵՐԸ



A decorative horizontal line featuring a central sunburst or star-like motif flanked by four teardrop-shaped elements.

## ՀԵՂԻՆԱԿ

### ՀՈՆ ԲԼՍՔԻՆ Մ. Ա.

Թարգմանիչ  
ԳՐԻՉ - ՔՆԱՐ



1913

4.07.2013

870

## ՆԱԽԱԲԱՆ

ՃՌՆ ԲՐԱՔԻՆ, որ արուեստի վերաբերեալ  
բոլոր նիւթերու չուրջ իսկատիպ ու պերճախօս  
գրող մը և կեանքի առաջնորդող ու ազնուացու-  
ցիչ վարդապետութեանց եռանդագին քարոզիչ  
մըն է, ծնած էր Լոնտոնի մէջ, 1819ին, և  
մեռաւ 1900 ին, Ուէսթմորլէնափի իր տունին  
մէջ: Ունի շատ մը զեղեցիկ և օգտակար երկա-  
սիրութիւններ, որոնք կարևոր տեղ կը գրա-  
ւեն Անդղիական գրականութեան մէջ: Անոր եր-  
կասիրութիւնները մեծ ազգեցութիւն ունեցած  
են բոլոր քաղաքակիրթ աշխարհին վրայ, և  
ԲՐԱՔԻՆԻ գործերը շատ օգնած են կեանքի  
խոէալնները կենդանացնելու, վարքուբարքի  
բարձր չափանիշներ տպաւորելու և քաղցրու-  
թիւն ու լոյս բերելու տեսակէտով այն կեան-  
քերուն՝ որոնք ուրիշ կերպով ձանձրալի ու  
տիսուր պիտի ըլլացին:

« Ոսկեգետի Թագաւորը » ԲՐԱՔԻՆԻ այն միակ  
երկն է որ ուղղակի աղայոց համար գրուած է,  
թէև ան պատանիներու և պատանուհիներու  
համար բաւական շատ երկեր գրած է:



63158-67

## ՈՍԿԵԳԵՏԻ ԹԱԳԱԽՈՐԸ

ԿԱՄ

### ՍԵՒ ԵՂԲԱՅՐՆԵՐԸ

(Արիւրիական աւանդավիակ մը)

#### Գ Լ Ո Ւ Խ Ա.

Թէ ի՞նչպէս Սեւ Եղբայրներու երկրագործական  
դրութիւննը խանգարուեցաւ Պրև. Հարաւ-Արեւըշ-  
եան-Հովհանն միջոցաւ :

Աթիրեայի (Աւանդավիա) մեկուսի ու  
լեռնոտ մէկ մասին մէջ հին ատենա-  
ները կար հովիտ մը որ զարմանալի ու  
ճոխ արդիւնաբերութիւն մը ունէր Հո-  
վիտը ամէն կողմէ շրջապատուած էր  
գերբուկ ու ապառաժուտ լեռներով,  
որոնց գագաթները միշտ ձիւնապատ  
էին և անոնցմէ վար քանի մը հեղեղ-  
զաներ վար կը խուժէին տեւական ջրը-  
վէժներ ձեւացնելով։ Այս ջրվէժներէն  
մէկը գէպի հիւսիս կը թափուէր, ահա-  
գին ճեղքի մը վրայէն, և այնչափ բարձր  
էր որ, երբ արեւը վարը ամէն բանի

համար մարը մտած էր և մութը կոշիած, անոր ճառագայթները դեռ կը շողային այս ջրվէժին վրայ, այնպէս որ այն ոսկերչն տեղատարափի մը կը նսմանէր եւ ահա այս պատճառով այդ հեղեղատը այդ կողմի բնակիչներէն Ոսկեղետ կոշուած էր։ Զարմանալի է որ այս գետակներէն ոչ մէկը դէպի հովիտը կը վազէր։ Անոնց ամէնն ալ լեռներուն անդիի կողմը կը վազէին, և ոլորապտոյտ կը գառնային ընդարձակ դաշտերուն մէջէն, բազմամարդ քաղաքներու քովէն։ Բայց ամպերը այնչափ տեւականօրէն կը քշուէին դէպ այդ ձիւնապատ կատարները, և այնչափ մեղմութեամբ կը հանդշէին անոնց մէջտեղի խորութեան վրայ որ երաշտութեան և խիստ տաք ժամանակներ, երբ շուրջի դաշտերը դրեթէ կ'այրէին, միշտ կ'անձրեւէր այդ փոքր հովիտին վրայ։ Այն տեղին հունձը այնչափ առատ, խոտերը այնչափ բարձր, խնձորները այնչափ կարմիր, խաղողները այնչափ դեղին և մեղրը այնչափ անուշ կ'ըլլար որ զայն տեսնել ամէն մարդու համար զարմանք մըն էր և, այդ վայրը կը կոչուէր Գանձի Զորը։

Այս հովիտին բոլորն ալ կը վերաբերէր երեք եղբայրներու որոնք կը կոշուէին Սեւուկ, Օհանն և Բարեբախտ։ Սեւուկ և Օհանն, եղկու երիցագոյն եղբայրները, շատ տգեղ մարդիկ էին՝ թաւու վայրահակ յօնքերով և փոքր ու ազօտ աշքերով, որոնք միշտ կէս մը գոց էին, այնպէս որ քեզի համար կարելի չէր անոնց ճիշդ մէջը տեսնել, և կը կարծէիր թէ անոնք մինչեւ քու մէջդ կը խորաթափանցեն։ Անոնք Գանձի Զորին մէջ երկրագործութիւն ընելով կ'ապշէին, և շատ ալ յաջող երկրագործներէին։ Անոնք կը մեռցնէին ամէն կենդանի որոնք կերածնին չէին արժեր։ Կը գնդակահարէին սարեակները՝ որովհետև անոնք կը կտցեն պտուղները, կը զարնէին ողնիները՝ որովհետեւ անոնք կոսվերը կը ծծեն. կը թունաւորէին ծղրիդները՝ որովհետեւ անոնք խոհանոցին մէջի փշրանքները կ'ուտեն. նաեւ կ'անշընչացնէին ճպուռները որոնք բոլոր ամառը կը ճռճռան հագնիներու վրայ։ Անոնք իրենց ծառաները կ'աշխատցնէին առանց վարձքի, մինչեւ որ անոնք ալ

գործել չուզէին, և այն ատեն կը կըռ-  
ուէին անոնց հետ ու առանց վճարումի  
դուռէն դուրս կը վրնտէին զանոնք ։  
Եատ զարմանալի պիտի ըլլար եթէ ա-  
նոնք այսպիսի աղէկ ագարակ մը ունե-  
նալով և այս կերպ երկրագործութիւն  
ընելով չարստանային ։ Եւ խսկապէս ալ  
շատ հարստացան ։ Անոնք յաճախ կ'աշ-  
խատէին իրենց բերքը քովերնին պահել  
մինչեւ որ հայցահատիկը շատ սղէր, ու  
այն ատեն կրկնապատիկ գինով կը ծա-  
խէին. դէկերով ոսկի ունէին ի-  
րենց տունին մէջ, բայց նորէն ալ լրս-  
ուած չէր թէ անոնք տասնոց մը կամ  
պատառ մը հաց տուած ըլլային բարե-  
սիրական նպատակի մը համար ։ Պատա-  
րագ տեսնելու բնաւ չէին երթար ու  
միշտ կը տրտնջային իրենց տասսանորդի  
տուրքը վճարելու համար ։ Վերջապէս,  
մէկ խօսքով, այնչափ անդութ ու հա-  
րստահարիչ բնութիւն մը ունէին որ,  
ամէն անոնցմէ որոնց հետ գործ ունէին՝  
«Սեւ եղբայրներ», մականունը առած էին։  
Կրտսերագոյն եղբայրնին, Բարեբախ-  
տը, կատարեալ հակադրութիւն մը կը  
կազմէր իր աւելի մեծ երկու եղբայր-

ներուն, թէ՛ տեսքով թէ՛ ալ նկարագի-  
րով, այնպիսի հակադրութիւն մը զոր  
հազիւ կարելի էր երեւակայել կամ  
բաղձալ ։ Ան հազիւ տամներկու տարե-  
կան կար, գեղադէմ, ծաւի աչքերով, և  
ամէն արարածի հանդէպ քաղցրաբարոյ ։  
Բնականաբար ան շատ չէր յարմարեր իր  
եղբայրներուն, կամ աւելի շիտակ կ'ըլ-  
լար ըսել՝ անոնք չէին յարմարեր անոր ։  
Անոր ընդհանրապէս շամփուր գարձնե-  
լու պաշտօնը կը տրուէր երբ խորովելիք  
բան մը ըլլար, ինչ որ շատ ալ չէր պա-  
տահեր, որովհետեւ այս եղբայրներուն  
արդարութիւն ըրած ըլլալու համար  
կրնանք ըսել թէ անոնք հազիւ թէ նուազ  
ինայով էին իրենց անձերուն քան ինչ  
որ էին ուրիշներու ։ Ուրիշ ատեններ  
ան կօշիկները, տախտակամածները կը  
մաքրէր, երբեմն ալ պնակները կը մաք-  
րէր՝ անոնց մէջ պատահմամբ մնացած  
բաները ուտելով, ու այդ իրեւ քաջա-  
լերութիւն մը իրեն, իսկ երբեմն ալ գո-  
հացուցիչ ըլլալու չափ աղուոր տփոց մը,  
այդ ալ իրեւ մարզանք ։  
Երկար ատեն մը գործերը այսպէս  
շարունակեցին ։ Վերջապէս շատ խոնաւ

ամառ մը եղաւ և շուրջի երկրին մէջ  
ամէն բան գէշ գնաց : Խոտերը հազիւ  
հնձուած էին դեռ, երբ խոտի գէղերը  
ամբողջութեամբ գէպի ծով քշուեցան՝  
ողողումի մը պատճառով . որթատուն-  
կերը ջարդուփշուր եղան՝ տեղայած  
կարկուտներէ, և հունձքը բոլորովին  
փճացաւ ածխահարութեան պատճառով:  
Միայն Գանձի Զորին մէջ էր որ ամէն  
բան սովորականին պէս աղէկ էր ու ա-  
պահով: Խնչպէս որ այդ ձորին մէջ անհձ-  
րե կ'ըլլար այն ատեն երբ ուրիշ տեղ  
եղած չէր, նոյնպէս նաեւ արե կ'ըլ-  
լար երբ ուրիշ տեղ չէր եղած: Ամէն  
ոք այս ագարակը կու գար ցորեն գնե-  
լու և կը մեկնէին անէծք տեղալով այս  
Սեւ Եղբայրներուն հասցէին: Անոնք ու-  
զած գիներնին կը պահանջէին և կ'առ-  
նէին ալ, միայն աղբատներէ բան մը  
չէին կրնար առնել, որովհետեւ անոնք  
եկած էին մուրալու, և անոնցմէ շատեր  
անոնց գուռին առջեւ անօթութենէ կը  
մեռնէին, և անոնք ամենաթեթեւ ու-  
շաղրութիւն մը իսկ չէին ընծայեր ա-  
նոնց:

Զմեռը մօտենալու վրայ էր և օդը

շատ ցուրտ էր՝ երբ օր մը երկու երի-  
ցագոյն եղբայրները գուրս ելած էին,  
և ելելու ատեն չէին մոռցած իրենց  
սովորական աղդարարութիւնը ընել Բարե-  
բախտին, զոր թողած էին իրենց խորո-  
ված պատրաստելու համար . անոր պատ-  
ուիրած էին որ ոչ ոք ներս ընդունի և  
մէկու մըն ալ բան մը չտայ: Բարեբախ-  
տը կրակին քով նստաւ, որովհետեւ  
գուրսը սաստիկ կ'անձրեւէր. խոհանոցին  
պատերն ալ արդէն խոնաւ էին և այդ-  
տեղը ընաւ հանգստաւէտ չէր: Ան խո-  
րովածը նորէն ու նորէն դարձուց, մին-  
չեւ որ աղէկ մը կարմրեցաւ: «Մե՛զք  
որ,» խորհեցաւ Բարեբախտը, «իմ եղ-  
բայրներս ոչ ոք կը հաւելերէն իրենց ու-  
ղանակից ըլլալու: Վստահ եմ թէ մինչ  
անոնք այս համեղ խորովածը ունին և  
գուրսը ուրիշներ չոր հացի կտոր մըն  
իսկ չունին, անոնց սիրտին հաճելի պի-  
տի ըլլար մէկը իրենց սեղանակից ընել:»  
Ճիշդ այս խօսքերը խորհած ատեն  
տունին գուռու երկու անգամ զարնուե-  
ցաւ, ու այնպէս ծանր ու խուլ ձայնով  
մը որ կարծես զարնողը չարաշար յոդ-

նած ըլլար—փշումի մը ձայնին կը նմանէր  
քան թէ բախումի:

«Հովը ըլլալու է,» ըսաւ Բարեբախտ,  
«ուրիշ ոչ ոք պիտի համարձակէր մեր  
տունին դուռը երկու անդամ զարնել:»

Ոչ. հովը չէր, բախումի ձայնը կը կ-  
նուեցաւ աւելի զօրաւոր, և մասնաւո-  
րապէս զարմանալի բանը սա էր որ  
դուռը զարնողը շատ աճապարանքի մէջ  
կ'երեւար և բոլորովին ալ անվախ՝ ա-  
նոր արդիւնքէն: Բարեբախտը պատու-  
հանին քով գնաց, բացաւ զայն, և գլու-  
խը դուրս հանեց տեսնելու համար թէ  
ո՛վ էր այդ դուռը զարնողը:

Ան ամենատարօրինակ տեսքով կար-  
ճահասակ պարոն մըն էր, զոր երբեք  
տեսած էր իր կեանքին մէջ: Շատ խո-  
շոր քիթ մը ունէր, և թեթեւապէս  
պղձագոյն էր. երեսները շատ կլոր էին  
ու կարմիր. կարելի էր ենթաղբել թէ  
ան վերջին քառասունըութ ժամուան  
մէջ մեծ կրակ մը փքոցած էր. անոր  
աչքերը ուրախապէս կը փայլէին երկար  
ու մետաքսանման արտեւանունքներուն  
մէջէն, պեխերը բերնին երկու կողմերը

ոլորած կը տնկուէին խցահանի մը պէս,  
իսկ մազերը տարօրինակ, խառն աղպըզ-  
պեղի գոյնով մը կ'իջնային ուսերն ի  
վար: Ան չորսուկէս ոտք հասակ ունէր  
և կոնածեւ գտակ մը գրուած էր որ  
գրեթէ հասակին չափ երկար էր, և ծայ-  
րէն երեք ոտք երկարութեամբ սեւ  
փետուր մը կախուած էր: Անոր բաճ-  
կոնակը կոնակին կողմէն բաւական եր-  
կարածեւ էր, բայց գրեթէ բոլորովին  
կ'անշքանար ուռուցիկ ծալքերուն մէջ  
խոշոր, սեւ և փայլուն գոյնով կրկնո-  
ցին, որ հանդարտ օդին շատ եր-  
կար կրնար գալ իրեն, բայց այդ հին  
տունը գլուխու չափ սաստկութեամբ  
փշող հովը ծալ ծալ կը ծածանեցնէր  
քղանցքները այն կրկնոցին, որ թեթեւա  
հագնողին հասակին քառապատիկը եր-  
կայն էր:

Բարեբախտ իր այցելուին եղական  
տեսքին այնչափ ապշած մնացած էր որ  
բառ մը չկրցաւ խօսիլ, մինչեւ որ ծեր  
պարոնը գուռին ուռնակին աւելի զօ-  
րաւոր բախումներ տալով ետեւը դար-  
ձաւ ու իր ծածանող կրկնոցին նայե-

ցաւ։ Այսպէս ըրած ատեն տեսաւ Բարեբախտի խարտեաշ գլուխը զոր պատուհանը կը շրջանակէր, ինչպէս նաեւ խոշորաբաց աչքերը և կիսաբաց բերանը։

«Բարեւ,» ըսաւ կարճահասակ պարոնը, «դուռը զարնողին դուռ բանալու կերպը այդ չէ. սաստիկ թրջած եմ, զիս ներս ընդունէ։»

Եւ շիտակը խօսելով կարճահասակ պարոնը աղէկ մը թրջուած էր։ Անոր դդակին փետուրը սրունքներուն մէջէն ծեծ կերած լակոտի մը պոչին պէս վար կը կախուէր, և անոր ծայրէն ջուր կը կաթէր՝ ինչպէս կը կաթի հովանոցի մը ծայրէն. պեխերուն ծայրէն ալ ջուր կը մցէր բանկոնակին գրպաններն ի վար և հոնկէ ալ դուրս, իբրեւ առուակ մը։

«Ներողութիւն, պարօն,» ըսաւ Բարեբախտ, «շատ կը ցաւիմ, բայց իսկապէս բանալ չեմ կարող։»

«Ի՞նչ ընել չէք կարող,» հարցուց ծեր պարոնը։

«Զեզ ներս չեմ կրնար ընդունիլ, պարօն, — իբաւ կ'ըսեմ թէ չեմ կրնար. եղբայրներս զիս մեռցնելու աստիճան

կը ծեծեն եթէ այդպէս բան մը ընել միտքէս իսկ անցնեմ։ Ի՞նչ կ'ուզէք պարոն։»

«Ի՞նչ կ'ուզե՞մ,» ըսաւ ծեր պարոնը խոժուած, «կրակ և պատսպարան կ'ուզեմ. և դուն ներսը մեծ կրակ մը վառած ես որ կը բռնկի, կը ճարճատի և պատերուն վրայ կը պարէ և ոչ ոք կայ հոդ զայդ վայելելու։ Կ'ուզե՞մ որ զիս ներս ընդունիս. ես միայն տաքնալ կ'ուզեմ։»

Բարեբախտը այս խօսակցութեան ատեն գլուխը պատուհանէն բաւական ժամանակ դուրս հանած ըլլալով կը զգար թէ իրապէս անհաճոյ ըլլալու աստիճան խիստ ցուրտ մը կար դուրսը, և երբ ետին դարձաւ ու տեսաւ այն աղուոր, ճարճատուն կրակը, որ իր բոցէ լեզուակիները մինչեւ ծխնելոյզը կ'երկարէր, կարծես թէ խորովուած միսին իւղն ու անուշ հոտը լզելու համար, սիրտը կը հալէր թէ այդ կրակը պարապ տեղը կը վառէր։ «Մարդը շատ թրջած կ'երեւայ,» ըսաւ փոքրիկն Բարեբախտ, «գոնէքառորդ ժամանակ համար ներս ընդու-

Նիմ զայն» Դէպի դուռը գնաց և բացաւ զայն. և մինչ ծեր պարոնը դուռէն ներս կը մտնէր՝ հովը սոսկալի փշումով մը ներս խուժեց. այնպէս որ տունին մինչեւ հին ծխնելոյզը դպրէցաւ:

«Ապրիս, բարի տղաս», ըսաւ ծեր կարճահասակ պարոնը. «դուն անհոգ եղիք քու եղբայրներուդ ընելիքին նկատմամբ. ես պէտք եղածը կը խօսիմ անոնց»:

«Խնդրեմ, պարոն, այնպէս բան մը մի փորձէք», ըսաւ Բարեբախտ. «Հեմ կրնար թողուլ որ դուք հոս մնաք մինչեւ անոնց վերադարձը, անոնք զիս կը մեռցնեն»:

«Տէ՛ր ողորմեա,» ըսաւ ծեր պարոնը, «շատ կը ցաւիմ որ անոնց մասին այսպիսի խօսքեր կը լսեմ: Հոս ո՞րչափ պիտի կրնամ մնալ ուրեմն»:

«Հազիւ մինչեւ որ այս խորովածը պատրաստուի, պարոն,» պատասխանեց Բարեբախտ, «ու ան ալ ահա՛ եփելու լմնալու վրայ է»:

Յետոյ ծեր պարոնը խոհանոցը իջաւ և ակութին (օձագ) քովիկը նստաւ. անոր

դդակը առաստաղէն վեր մինչեւ ծխնելոյզը հասնելու բարձրութիւնը ունէր, որովհետեւ առաստաղէն բաւական բարձր էր:

«Դուք հոգ շուտով պիտի չորնաք, պարոն,» ըսաւ Բարեբախտ և նորէն նըստաւ խորովածը դարձնելու համար: Բայց ծեր պարոնը հոն չորցաւ ու անոր վրայէն ջուրը կաթէլ կաթիլ կը վաղէր կրակի անթեղներուն վրայ, կրակը կը սուլէր ու կը ցացտէր և կը սկսէր մարիլ ու սեւնալ: Պարոնին կրկնոցին պէս կրկնոց մը երբեք տեսած չէր Բարեբախտ. անոր իւրաքանչիւր ծալքէն ջրորդանի (օլուգ) մը պէս ջուր կը վաղէր:

«Ներողութիւն, պարոն,» ըսաւ Բարեբախտ վերջապէս, տեսնելով որ ջուրը մնդիկի գոյնով առուտակներ շինելով կը վաղէր յատակն ի վար, «կրնամ ձեր կրկնոցը մէկդի առնել»:

«Ոչ, շնորհակալ եմ,» ըսաւ ծեր պարոնը:

«Իսկ ձեր դգա՞կը»

«Շատ հանդիստ եմ, շնորհակալ եմ,» ըսաւ ծեր պարոնը քիչ մը խստութեամբ:



«Բայց . . . պարոն, . . . շատ կը ցաւիմ,»  
ըստ Բարեբախտ վարանոս, «բայց . . .  
պարոն, . . . այդ կերպով . . . կրակը պի-  
տի . . . մարէք.»

«Այն առեն այդ խորսվածը պատ-  
րաստել առելի երկար պիտի տեւէ,» ըստ  
այցելու պարոնը չոր կերպով մը:

Բարեբախտ շատ շուարած էր այցե-  
լուին այս վարմունքին պատճառով. ան  
խոնարհութեամս ու միեւնոյն առեն  
պազութեամբ կը խօսէր: Տղան հինգ  
վայրկեան ալ իր գործով զբաղիլ շա-  
րունակեց:

«Այդ խորսվածը շատ համար կ'ե-  
րեւայ,» ըստ ծեր պարոնը վերջապէս,  
«առելէ քիչ մը կրնա՞ս տալ ինձի:»

«Օ՛, այդ անկարելի է, պարոն,» ըստ  
Բարեբախտ:

«Ետ անօթի եմ,» շարունակեց ծեր  
պարոնը, «ոչ երէկ ոչ ալ այսօր բան մը  
կերած եմ: Վստահ եմ որ անոնք բնաւ  
պիտի չհասկեան, եթէ ուկրազօդի կող-  
մէն մաս մը տաք ինձի:»

Ան այնչափ մելամաղձոտ եղանակով  
մը խօսեցաւ որ Բարեբախտի սիրտին

շատ դպաւ: «Անոնք այսօր ինձի կտոր  
մը միայն տալ խոստացան, պարոն,» ըստ  
ան, «ես այդ կտորս կրնամ տալ ձե-  
զի, բայց ոչ առելի:»

«Աղնի՛ւ տղայ,» ըստ ծեր պարոնը  
գոհունակ գէմքով մը:

Այն առեն Բարեբախտ պնակ մը ա-  
ռաւ ու տաքցուց և դանակն ալ սրեց:  
«Հոգս չէ, եթէ նոյն իսկ ծեծ ուտեմ  
ասոր համար,» կը խորհէր ան: Երբ ան  
խորսվածէն խօսոր կտոր մը կը կտրէր  
դուռը մեծ աղմուկով բաղխուեցաւ: Ծեր  
պարոնը կրակէն այրածի պէս յանկարծ  
նասած տեղէն վեր ցատկեց: Բարեբախտ  
կտորը նորէն տեղը տեղաւորեց՝ յայտնի  
չընել աշխատելով և վազեց դուռը բա-  
նալու համար:

«Ինչո՞ւ համար դուռը բանալու ու-  
շցար և մեղ ստիպեցիր որ քեզի սպա-  
սենք անձրեւին տակ,» ըստ Սեւուկ,  
ներս մտնելով և իր հովանոցը Բարե-  
բախտի երեսը նետելով: «Ճէ՛, ինչո՞ւ,  
ըսէ նայիմ, պղտիկ սրիկայ,» ըստ Թհան,  
ապտակ մը իշեցնելով անոր ականջին  
վրայ՝ մինչ ան իր եղբօր ետեւէն խո-  
հանոց կ'երթար:

«Տէր ողօրմեա,» ըսաւ Սեւուկ երբ  
դուռը բացաւ։

«Ամէն,» ըսաւ կարճահասակ պարունը, որ իր գդակը հանած և կայնած էր խոհանոցին մէջտեղը ու յարդական խոնարհութիւն կ'ընէր արագաբար։

«Ո՞վ է աս,» ըսաւ Սեւուկ, ձեռքը դրոնակ մը (օգլաղը) առնելով ու կատաղի խոժոռումով մը Բարեբախտի նաշյելով։

«Իրաւ կ'ըսեմ, որ չեմ գիտեր, եղբայր,» ըսաւ Բարեբախտ սարսափահար։

«Ան ի՞նչպէս ներս մտաւ,» գոռաց Սեւուկ։

«Սիրելի եղբայրս,» ըսաւ Բարեբախտ պատատական կերպով, «ան սասիկ թըրջած էր . . .»

Գրտնակը Բարեբախտի գլուխին վրայ կ'ենար երբ ձեր պարոնը անմիջապէս իր կոնածեւ գդակը անոր գէմ բռնեց, և հարուածը գդակին վրայ անհանկ մը իջաւ որ անոր մէջի ջուրը խոհանոցին մինչեւ պատերը ցայտեց։ Զարմանաւին այն էր որ գրտնակը գդակին դըպչելուն պէս Սեւուկին ձեռքէն ելաւ ու

հովէն գարձող յարդի շիւղի մը պէս դառնալով սենեակին մէկ տնկիւնը թռաւ։

«Դուք ո՞վ էք, պարան,» հարցուց Սեւուկ նորեկին դառնալով։

«Հոս ի՞նչ գործ ունիք,» մումուց 0հան։

«Ես խեղճ ծերուկ մըն եմ, պարոն,» ըսաւ կարճահասակ ծեր պարոնը համեստօղէն, «և ձեր կրակը տեսայ պատուհանէն և քառորդ ժամ մը հոս պատսպարուելու հրաման խնդրեցի։»

«Ուրեմն, նորէն ձեր եկած ճամբէն ետ գարձէք,» ըսաւ Սեւուկ, «արգէն մեր խոհանոցին մէջ բաւական ջուր ունինք և չենք ուզեր որ լուացարանի վերածենք զայն։»

«Ինձի պէս ծերուկ մը գուրս վուընտելու համար այս շատ ցուրտ օր մընէ, պարոն, սա ճերմակ մազերէս պատկառեցէք։» Խնչպէս առաջ ըսի ձեզի, անոր մազերը ուսերն ի վար կը կախուէին։

«Հէ՞,» ըսաւ 0հան, «բաւական երկար մազեր ունիս և անոնք կընան քեզ տաք պահել, քալէ նայիմ։»

«Շատ անօթի եմ, պարունակը, արդար չգացած չէք հաճիր լինծի կառը մը հայ շնորհք ընկել»

«Ի՞նչ, հա՞յ կ'ուղես,» ըստ Սեւուկ,  
«կը կարծե՞ս թէ մեր հայով ուրիշ բան  
մը չենք կրնար ընկել բայց միայն զայն  
քեզի պէս կարմրաքիթ մարդուկներու  
տալ»

«Ի՞նչո՞ւ չես ծախեր քու դդակիդ  
վրայի փետուրը,» ըստ Օհան ծագաւ-  
կան շեշտով մը «Շուտ դուքս կարսուէ»:

«Պատառ մը հայ, պարոն,» ըստ ծեր  
մարդը:

«Կորսուէ կ'ըսեմ քեզի,» ըստ Սեւ-  
ուկ:

«Կ'աղաշեմ, կը պաղատիմ, պարոն...»

«Դուքս կորսուէ և սատկէ,, պոստը  
Օհան, անոր օձիքէն բոնելով: Բայց հա-  
զիւ թէ ծեր պարունին օձիքին դպած-  
էր՝ ինք ալ գրտնակին ետեւէն դլուր-  
ուեցաւ թաւալդլոր մինչեւ դրտնակին  
դլուրուած անկիւնը: Յետոյ Սեւուկ սոս-  
կալի կերպով զայրացաւ ու ծեր պարո-  
նին վրայ յարձակեցաւ զայն դուքս  
գոնտելու համար: Բայց ան ալ հազիւ

անոր դպած՝ դլուրուեցաւ Օհանին և  
դլունակին և անուին և դլուխը պատին  
զարնուեցաւ, ու երեքն ալ հան ինկած  
կը մմային:

Յետոյ ծեր պարոնը արագաբար  
դառնալու շարժում մը ըրտու հակառակ  
ուղղութիւնով, և բաւական դարձաւ  
մինչեւ որ իր երկար կրկնոցը բոլորովին  
մարմինին փաթթուեցաւ. յետոյ դդակին  
ալ դլուխը դրտու մէկ կողմը ծռած  
ձեւով մը (որովհետեւ կարելի չէր զայն  
շիտակ դնել առանց անոր ծայրը ա-  
ռաստաղէն դուքս հանելու). անդամ  
մըն ալ ոլորեց իր խցահանաձե պեխերը  
և կատարեալ սկավարիւնով մը պատաս-  
խանեց. «Պարոններ, բարի ըստ ձեզ.  
այս զիշեր ժամը տասներկուքին (կէս  
դիշերին) նորէն պիտի այցելում ձեզի:  
Բայց հիմա իմ տեսած այս հիւրամերժ  
վարմաւնըն ետրը կարծեմ չէք զարմա-  
նար երբ ըսեմ թէ այդ այցելութիւնս  
վերջինը պիտի ըլլոյ:

«Եթէ անդամ մըն ալ հստ ձեռքս  
անցնիս . . .» մոլուաց Սեւուկ, կէս մը  
սարսափած յառաջ դալով կը դլուրուած

անկիւնէն — Բայց ան դեռ իր խօսքը չմնցուցած՝ ծեր պարոնը իր ետեւէն տունին դուռը մեծ աղմուկով մը գոցեց. նոյն պահուն խորտուբորտ ամպակոյա մը անցաւ պատուհանին առջեւէն, և տարբեր ձեւափոխութիւններով իջաւ հովիսն ի վար, դարձդարձիկ շարժումներ ընելով օդին մէջ, և վերջապէս տեղատարափ անձրեւի ձեւով հալելով։

«Հիանալի՛ դործ շիտակը, Պրն. Բարեբախտ,» ըստ Սևուկի։ «Խորովածը պիտի մը մէջ դիր, պարոն, եթէ անդամ մըն ալ քեզ այսպիսի խաղի մը մէջ բռնեմ... ինչ որ է, խորովածը ինչո՞ւ կտրեցիր։»

«Բայց դուն, ինչպէս գիտես, ինձի կտոր մը տալ խոստացաբ, եզրայը,» պատասխանեց Բարեբախտ։

«Հա՛, դուն, ալ անոր համար խորովածը տաք տաք կը կտրէիր կարծեմ, և միսին հալած բոլոր ճարպը պիտի մէջ պիտի առնէիր։ Ալ դժուար կը խոստանամ քեզի ատանկ բան։ Սենեակէն դուրս կորսուէ, պարոն, և հաճէ ածխանցին մէջ մնալ մինչև որ քեզ կանչեմ։»

Բարեբախտ տխուր դէմքով սենեակէն դուրս ելաւ։ Եղբայրները կրցածնուն չտփի կերան խորովածէն և մնացածը դարակի մը մէջ դրին ու կվայեցին, և կերակուրէն ետքը բաւական ալ կանծնեցին։

Դատ սոսկալի դիշեր մըն էր այդ դիշերը։ Անդադար սաստիկ հով կը փըչէր ու անձրեւ կու դար։ Եղբայրները հաղիւ խելք ըրին պատուհաններուն փեղկերը գոցել և դուռին ետեւէն կրկին նիգերը դնել, դեռ անկողին չմտած։ Անոնք բոլորը նոյն սենեակին մէջ կը պառկէին։ Երբ ժամը տասներկու զարկաւ, սոսկալի ժխորէ մը արթընցան։ Դուռերնին այնպիսի սաստկութեամբ մը բացուեցաւ որ տունը հիմէն մինչեւ առաստաղը դպրեցաւ։

«Ի՞նչ է այդ...» դուշեց Սեւուկ, անկողինէն դուրս ցատկելով։

«Միայն ես եմ», ըստ կարճահասակ պարոնը։

Երկու եղբայրները իրենց բարձերուն վրայ նստած մութին մէջէն կը դիտէին։ Սենեակը ջուրով լեցուած էր, և լրտանի

ազօտ ճառագայթով մը, որ փեղկի մը  
ճեղքէն ներս կը թափանցէր, կրնային  
տեսնել թէ ջուրին վրայ պղպջակի խո-  
չոր դունս մը կը լողար և կը ճօճէր  
վար վեր, իբրև խիցի կտոր մը . դուն-  
տին վրայ շատ մեծագնի բարձի մը  
վրայ ընկողմանած էր կարճահասակ ծեր  
պարոնը, իր նոյն զղեստներով և դդա-  
կով։ Հիմա անոր բարձր դդակին համար  
շատ տեղ կար, որովհետեւ տունին առաս-  
տաղը վերցուած էր։

«Կը յաւիմ որ ձեզ անհանդիստ  
կ'ընեմ,» ըստ այցելուն ծաղրական  
շեշտով մը, «կարծեմ ձեր անկողինը խո-  
նաւ է, թերես աղէկ կ'ընէր որ ձեր  
կրտսեր եղլոր սենետկը երթաք, ևս այն  
սենետկին ձեզունը չլերցուցի։»

Անոնք նոր թելաղբութիւն մըն ալ  
չսպասեցին և բոլորովին թրջուած փու-  
թացին Բարեբախտին սենետկը, և մեծա-  
պէս տաղնապած ու սարսափած էին։

«Իմ այցաքարտս պիտի դժոնէր խո-  
հանոցի սեղանին վրայ,» ձայն տուաւ  
ծեր պարոնը անոնց ետեւէն։ «Յիշեցէր  
վերջին այցելու թիւնս։»

«Երկինք տա՞ր որ . . .» ըստ Սեւուկ  
դողլ-զալով. և պղպջակի գունուը անհե-  
տացաւ։

Վեղապէս գիշերը լուսցաւ և երկու  
եղբայրները Բարեբախտի սենետկին փոքր  
պատուհանէն դուրս նայեցան առտուն։  
Գանձի Զորը աւերակոյտ մը դարձած էր։  
Հեղեղը տարած էր ծառերը, հունձքը,  
արջառները, ու անոնց տեղ թողած էր  
կարմիր աւազ ու դորշ տիղմ։ Երկու  
եղբայրները դողլալով ու սարսափահար  
գացին խոհանոց։ Տունին առաջին յար-  
կը ջուրով ողղղուած էր, և արմտիք,  
դրամ ու շարժական գրեթէ բոլոր բա-  
ները քշուած տարուած էին ու միայն  
ճերմակ և փոքր այցաքարտ մը մնացած էր  
խոհանոցի սեղանին վրայ։ Այցաքարտին  
վրայ ալ խոչը, ծածանող ու երկայ-  
նաձև գիրերով հետեւեալ բառերը  
դրուած էին. —

ՊՐՆ. ՀԱՐԱՒ-ԱՐԵՒՄՏԵԱՆ-ՀՈՎ

ԳԼՈՒԽ Բ.

Թէ ի՞նչ ըրին երեք եղբայրները Պրն. Հարաւ-Արեւելեան-Հովին այցելութենէն եսի՞ս, և թէ փոքրիկն Բարեբախտ ի՞նչ կերպով տեսակցութիւն ունեցաւ Ուկեզէի Թագաւորին հետ:

Պրն. Հարաւ-Արեւելութեան-Հովիլ խոս-  
տումը պահեց : Վերոյիշեալ ծանրակշիռ  
այցելութենէն ետքը անդամ մըն ալ  
չմտաւ Գանձի Զորը . և աւելի դէշը սա  
էր թէ ան իր ազգականներուն՝ բոլոր  
Արեւելութեան-Հովիլուն՝ վրայ այնչափ մեծ  
ազգեցութիւն ունէր և զայն այնչափ զօ-  
րաւորապէս կը դորձածէր որ անոնց բո-  
լորն ալ նման ընթացք մը ունենալ հա-  
ւանեցան : Այսպէս տարուէ տարի ահձ-  
րեւ չեկաւ այդ հովիտին մէջ : Թէեւ  
վարի դաշտերուն մէջ ամէն բան կա-  
նանչ ու բարգաւաճ կը մնար, բայց Երեք  
Եղբայրներու ժառանգութիւնը անապատ  
մը դարձած էր : Այն՝ որ Երեքն այդ-  
երկրին մէջ ամէնէն արդասաբեր հովն էր՝  
հիմա փոփոխական աւազակոյա մը դար-  
ձած էր, և Եղբայրները այդ ձա-  
խորդ օդերուն դէմ մաքառելու ա՛լ ան-

կարող՝ յուսսահատաբար լքեցին իրենց  
պապենական անարժէք ստացուածքը,  
ապրուստի միջոց մը ճարելու համար  
վարի դաշտերու քաղաքներուն և մար-  
դերուն մէջ : Անոնց բոլոր դրամը կոր-  
սուած էր ու բան մը մնացած չէր բաց ի  
հետաքրքրական, հնաձեւ քանի մը կտոր  
ոսկեդրուագ անօթներէ, որոնք վերջին  
մնացորդն էին իրենց ապօրինապէս  
ստացուած հարստութեան :

“Արդեօք ոսկերչութիւնը ընէինք՝ ի՞նչ-  
պէս կ'ըլլար , „ ըստ Սեւուկ Օհանի, մինչ  
այդ մեծ քաղաքը կը մտնէին . “ատ ա-  
ղէկ հանած վարածի արհեստ մըն է ,  
կրնանք ոսկիին բաւական պղինձ խառ-  
նել առանց ուրիշին հասկնալի ընելու : ”

Համաձայնեցան թէ շատ աղէկ խոր-  
հուրդ մըն էր այդ . հալոց մը վարձե-  
ցին և ոսկերչութիւնը ընել սկսան : Բայց  
երկու պարագաներ աղդեցին անոնց այս  
նոր արհեստին . նախ՝ ժողովուրդը պղին-  
ձախառն ոսկիէն գոհ չեղան . Երկրորդ՝  
երկու երիցագոյն Եղբայրները, ո՛ր ատեն  
որ բան մը վաճառէին , փոքրիկն Բարե-  
բախտը հոն հալոցին քով կը ձգէին և

այն դրամով արբենալու համար քովիր գարեջրատունը կ'երթային։ Այսպէս առնձի իրենց բոլոր ոսկին հալեցուցին և չկրցան նորէն ոսկի դնելու դրամ աւելցնել, և վերջապէս մնացին միակ թաշտով մը զոր հօրեղբայրներէն մէկը տուած էր Բարեբախտի. ան շատ կը սիւրէր իր այս թասը և բոլոր աշխարհ իսկ տային՝ պիտի չուղէր բաժնուով անկէ, թէեւ անոր մէջէն կաթէ ու ջուրէ զատ բան մը խմած չէր։ Թասը բաւական տարօրինակ տեսքով բան մըն էր։ Բըռնատեղը կը ձեւանար ոսկի մաղերու երկու երկայն հիւսակներէ՝ այնչափ գեղցեցկօրէն հիւսուած որ աւելի մետաքսի կը նմանէին քան թէ մետաղի։ Այս հիւսակները կ'իշնային և կը խառնուէին մօրուքին և պեխերուն, որոնք նոյնպէս նոյն նուրբ արուեստով շինուած էին և կը շրջանակէին ու կը զարդարէին շատ խոժոռ փոքր երես մը, շինուած կարմրագոյն ոսկիէ, թասին ճիշդ առջեւի կողմը. այդ գէմքը ունէր զոյդ մը աչքեր որ կարծես թասին բոլոր շրջանակին կը նայէին։ Այդ թասէն խմել անկարելի

էր, առանց անոր ուշաղիր նայուածքին ենթարկուելու։ Եւ Սեւուկ հասատապէս կը պնդէր թէ անդամ մը այդ թաշտով տասներկօթը անդամ լիվլեցուն դիմի խմելէ ետքը աեսաւ որ այդ աչքերը կը քթթէին։ Երբ կարդը թասին եկաւ հալեցնելու և դդալ շնէելու համար փոքրիկն Բարեբախտի սիրտը։ Կէս մը կոտրեցաւ, բայց եղբայրները միայն խընդացին անոր վրայ, թասը հալոցին մէջ նետեցին հալելու համար և նորէն դարեցատուն դացին դանդաշելով և սովորականին պէս հոն թողուցին Բարեբախտը որ, երբ ոսկին հալի, անոնցմէ ձուղեր ձուլէ։

Երբ անոնք դացին, Բարեբախտ հրաժեշտի նայուածք մը նետեց հալոցին մէջ հալով իր հին բարեկամին։ Անոր երկայն մաղերը հալած լմնցած էին, բան մը մնացած չէր բայցի կարմիր քիթէն ու փայլուն աչքերէն, որոնք ամէն ժամանակէ աւելի չար նայուածքներ ունէին։ «Եւ այդ նայուածքը զարմանալի ալ չէ» կը խարհէր Բարեբախտ, «այսպէս չարաշար գործածուելէ ետքը»։ Դէպի

պատուհանը գնաց ցաւած սիրտով և հոն  
նստաւ իրիկուան թարմ օդը ծծելու և  
հալոցին տաքութենէն քիչ մը ազատուե-  
լու համար։ Այս պատուհանէն ուղղակի  
կը տեսնուէր այն լեռնաշղթան, որ ինչ-  
պէս քեզի ըսի, կ'իշխէր Գանձի Զորին  
վրայ, և աւելի այն կատարը որմէ կը  
թափէր Ոսկեգետը։ Այս իրիկնամուտի  
ատենն էր, և երբ Բարեբախտ պատու-  
հանին առջեւ նստաւ՝ լերան դադաթին  
ժայռերը մայրամուտ արեւին վերջին  
ծիրանի շողերով կարմրած տեսաւ։ Հոն  
կրակի գոյնով ամպերու փայլուն քու-  
լաներ կը բռնկէին ու կը դողդղային ա-  
նոնց շուրջը, և գետը՝ այդ ամէնէն ա-  
ւելի փայլուն՝ իրբեւ մաքուր ոսկիի տա-  
տանող սիւն մը, գահաւանդէ գահաւանդ-  
կը վաղէր։ Անոր վրայ ծիածանի լայն ու  
կրկնակ գօտի մը տարածուած էր որ  
ջուրին կաթիլներուն ցայտումին համե-  
մատութեամբ փոփոխակի կը նսեմանար  
ու կը փայլէր։

“Ա՛հ, „ ըստ Բարեբախտ բարձրա-  
ձայն, այդ տեսաշանը քիչ մը գիտելէ  
ետքը, “Եթէ այդ դետը իրապէս ամ-

բողջ ոսկի ըլլար, ո՞րչափ աղէկ բան մը  
սիրտի ըլլար։”

“Ոչ, աղէկ պիտով չըլլար, Բարեբախտ, „  
ըստ յստակ, մետաղային ձայն մը, անոր  
ականջին ճիշդ մօտէն։”

“Վայ, ի՞նչ է այդ, „ բացադանչեց  
Բարեբախտ յանկարծ տեղէն ցատկելով։  
Հոն ոչ ոք կար։ Սենեակին շուրջը, սե-  
ղանին տակը և քանի անդամներ ետեւը  
նայեցաւ, բայց վատահաբար ոչ ոք կար  
հոն, ու նորէն նստաւ պատուհանին առ-  
ջեւ։ Այս անդամ թէեւ շխոսեցաւ,  
բայց շխորհիլ չէր կրնար թէ շատ յար-  
մար պիտի ըլլար, եթէ այդ դետը իրա-  
պէս ոսկի ըլլար։”

“Ո՛չ երբեք, տղաս, „ ըստ նոյն ձայնը  
ա՛լ աւելի բարձր։”

“Ա՛, „ ըստ Բարեբախտ նորէն, “ի՞նչ  
է այդ, „ նորէն նայեցաւ բոլոր անկիւն-  
ները և պահարանները, և կրցածին չափ  
արագաբար գարձաւ սենեակին մէջտեղը,  
կարծելով թէ ետեւը պահուած մէկը  
կար, բայց նոյն ձայնը նորէն եկաւ իր  
ականջին։ Հիմա նոյն ձայնը կ'երգէր  
զուարթաբար, “Լալա-թրալա, „ երգին

խօսքերը չէին լսուեր, այլ արագ, եռանդագին մեղեդի մը, եռալու վրայ եղող սանի մը հանած ձայնին նման ձայն մը : Բարեբախտ դուրս նայեցաւ պատուհանէն : Ոչ, ձայնը տունին մէջէն էր անպատճառ . վեր և վար նայեցաւ : Ոչ, այդ նոյն սենեակին մէջ էր անպատճառ, և ամէն վայրկեան աւելի արագ չափով ու խազերով կ'երգուէր — “Լալաթրալա :” Բարեբախտ յանկարծ հասկըցաւ թէ ձայնը աւելի բարձը կը լըսուէր երբ ինք հալոցին մօտ գար: Դէպի հալոցին դռնակը դնաց և ներս նայեցաւ . այս, այն ոչ թէ հալոցին մէջէն գալ կ'երեւար, այլ ճիշդ բովին մէջէն : Հալոցը բացաւ և մեծ սարսափով ետես փախաւ, որովհետեւ բովը յայտնաբար կ'երգէր : Ան սենեակին ամէնէն հեռաւոր մէկ անկիւնը՝ ձեռքերը իրարու անցուցած ու բերանաբաց կեցաւ, և երբ երգը դադրեցաւ՝ ձայնը աւելի որոշ և աւելի յստակ եղաւ :

“Մօ, տղայ, ” ըսաւ ձայնը :

Բարեբախտ չպատասխանեց :

“Մօ Բարեբախտ, տղաս, ” ըսաւ բովը նորէն :

Բարեբախտ իր բովը քաջութեան կոչում ըրաւ, ուղղակի դէպի բովը դնաց, դուրս քաշեց զայն հալոցէն և մէջը նայեցաւ : Ոսկին բովը նորէն հաւած էր և անոր մակերեսը գետի մը երեսին պէս հարթ ու յղկուն էր . բայց Բարեբախտ այդ մակերեսին մէջ փոխանակ իր դէմքին ցոլացումը տեսնելու, անոր մէջ ոսկիին տակէն տեսաւ իր հին բարեկամին, թասին կարմիր քիթը և սուր նայուածքը, որ հազարապատիկ աւելի կարմիր և սուր էին քան որ տեսած էր զանոնք իր կեանքին մէջ :

«Եկուր, Բարեբախտ, տղաս, ” ըսաւ ձայնը նորէն բովին մէջէն, “Ես աղէկ եմ: Զիս դուրս թափէ:”

Բայց Բարեբախտ չափազանց ապշած էր այդպիսի բան մը ընելու համար :

“Քեզի կ'ըսեմ որ զիս դուրս թափէս, ” ըսաւ ձայնը աւելի խստօրէն :

Բարեբախտ դեռ չէր կրնար շարժում մը ընել:

“Զիս գուլս պղետի թափե՞ս,, ըստ  
ձայնը աւելի զայրադին, “առստիկ տաք-  
ցած եմ”.

Զօրաւոր ճիգով մը Բարեբախտ կըք-  
շաւ իր ձեռքերը դործածել, բովը բըռ-  
նեց ու ծռեց՝ սովոր գուրս թափելու  
համար. բայց անկէ հեղուկ մը դուրս  
վազելու տեղ նախ զոյդ մը փոքր, սի-  
րուն, գեղին սրունքներ դուրս ելան,  
յետոյ վերարկուի ծայրեր մը, անկէ  
ետքը զոյդ մը թեւեր՝ ետին կապուած,  
և վերջապէս իր բարեկամ թասին շատ  
ծանօթ գլուխը Այս բովոր անդամները  
դուրս ելլելու ատեն միանալով, եռան-  
դագին կեցան յատակին վրայ երկուք  
ու կէս սոտք բարձրութեամբ փոքր սո-  
կեղէն դաճաճի մը ձեւով:

“Եատ բարի,, ըստ գաճաճը, նախ  
սոտքերը և յետոյ թեւերը երկարելով,  
յետոյ ալ գլուխը վեր վար և կարելի  
եղածին չափ ալ շուրջանակի շարժելով  
հինգ վայրկեանի չափ առանց կենալու,  
երեւութապէս կարծես փորձելով թէ  
իր բովոր անդամները յարմարապէս տե-  
ղաւորուած էին, մինչ Բարեբախտ լուռ

հիացումով մը կեցած էր զայն դիտե-  
լով։ Ան երկայնքէն ճեղքուած ոսկեհիւս  
բաճկոնակ մը հագած էր, որուն հիւս-  
ուածքը այնչափ նուրբ էր որ անոր վրայ  
պրիսմակային գոյներ կը փայլէյին իբրև  
գաղտակուրի (սէտէֆ) մակերեսին վրայ,  
և այս փայլուն բաժկոնակին վրայ անոր  
մազերն ու մօրուքը գետնէն վեր մին-  
չեւ կէս մէջքը կ'իջնային ծածանող  
գանգուրներով ու այնչափ նուրբ որ  
Բարեբախտ հաղիւ կրնար ըսել թէ ո՛ւր  
կը վերջանային անոնք, կարծես օդի  
պէս կ'անօսրանային։ Դիմադիծը կարծես  
նոյն նրբութիւնը չունէր, աւելի կոշտ  
էր ու թեւեւապէս պղնձագոյն, տես-  
քով արտայայտիչ էր և իր փոքրահասակ  
տէրով վրայ աւելի կամակօր ու յամառ  
արամագրութիւն մը կը ցուցնէր։ Գա-  
ճաճը, երբ ինքզինքը քննելը լմնցուց, իր  
փոքր ու սուր աչքերը Բարեբախտի վրայ  
դարձուց և մէկ երկու վայրկեան հան-  
դարտօրէն նայեցաւ անոր։ “Ոչ, պիտի  
չըլլար, Բարեբախտ, տղաս,, ըստ փոք-  
րիկ մարդք:

Հարկաւ խօսակցութեան սկսելու

անակնկալ կերպ մըն էր այս : Կրնար  
իրապէս վերաբերիլ Բարեբախտի մտա-  
ծումներու շարքին որ յառաջ եկած էր  
գաճաճին ըովէն ըրած դիտուլութիւն-  
ներով, բայց ի՞նչ բանի ալ վերաբերէր,  
Բարեբախտ անոր ըսածին վրայ վիճա-  
բանելու հակամիտութիւն չունէր :

“Պիտի չըլլա՞ր, պարոն,,” ըսաւ Բա-  
րեբախտ շատ մեղմութեամբ և խոնար-  
հաբար:

“Ոչ,” ըսաւ դաճաճը վճռապէս, “ոչ,  
պիտի չըլլա՞ր, Այս ըսելով դաճաճը իր  
դգակը յօնքերուն վրայ քաշեց աղէկ մը  
և երեք ոտք հեռաւորութեամբ երկու  
շրջան ըրաւ սենեակին մէջ, վեր վար,  
սրունքները շատ վեր բարձրացնելով և  
ուժով մը զանոնք գետին դնելով: Այս  
դադարը պատեհութիւն մը եղաւ Բա-  
րեբախտի իր խորհուրդները ամփոփե-  
լու համար, և իր փոքրահասակ այցելուն  
այդպէս սարսափով դիտելու մեծ պատ-  
ճառ մը չտեսնելով և հետաքրքրութիւնը  
հիացումին յաղթելով՝ մասնաւոր զգու-  
շութեամբ հարցում մը ուղղել համար-  
ձակեցաւ:

“Կը խնդրեմ, պարոն,,” ըսաւ Բարե-  
բախտ աւելի վարանոտ, “դուք իմ  
թա՞սս էիք :”

Ասոր վրայ փոքրիկ մարդը ուղղակի  
դառնալու ձեւ մը ըրաւ, Բարեբախտին  
քով քալեց և իր լման բարձրութեան  
համելու փորձ մը ըրաւ: “Ես,,” ըսաւ  
փոքր մարդը “Ոսկեգետի Թագաւորին  
եմ:” Այս ըսելով նորէն դարձաւ և վեց  
ոտք հեռաւորութեամբ երկու շրջան ալ  
ըրաւ՝ ժամանակ տալու համար որ սար-  
սափը, զոր իր յայտաբարութիւնը յա-  
ռաջ ըերած էր իր ունկնդրին վրայ,  
անցնի : Ասկէ եաքը նորէն դէպ ի Բա-  
րեբախտը քալեց և լուռ կեցաւ, իբր  
թէ դիտողութիւն մը սպասելով իր յայ-  
տաբարութեան :

Բարեբախտ՝ ինչ ալ ըլլայ՝ բան մը  
ըսել մտադրեց: “Կը յուսամ, Զերդ վե-  
հափառութիւնը շատ լաւ էք,,” ըսաւ Բա-  
րեբախտ :

“Մտիկ ըրէ,,” ըսաւ փոքրիկ մարդը,  
առանց այս քաղաքավար հարցումին պա-  
տասխանել բարեհաճելու : “Ես Թագաւ-  
որն եմ անոր զոր դուք մահկանացու-

Ներդ Ոսկեգետ կը կոչէք ։ Զեւը որուն  
մէջ կը տեսնէիր զիս՝ աւելի զօրաւոր  
թագաւորի մը չարութեան պատճառով  
էր, և դուն անոր կախարդութենէն այս  
վայրկեանիս աղասիցիր զիս ։ Ինչ որ  
տեսայ քու մասին և քու չար եղբայր-  
ներուդ ցուցուցած վարմունքիդ մասին  
զիս պատրաստ կ'ընէ քեզի ծառայելու  
համար ։ Հետեւաբար ըսածիս ուշագրու-  
թիւն ըրէ ։ Ով որ մագլցի կատարը այն  
լերան, որմէ կը տեսնես որ կը բղիի  
Ոսկեգետը, և այդ գետին ակնազ-  
բիւրին մէջ թափէ երեք կաթիլ օքհ-  
նեալ ջուր, անոր, ու միայն անոր հա-  
մար գետը ոսկի պիտի ըլլայ ։ Բայց ա-  
ռաջինին մէջ ձախողող ոչ ոք կրնայ յա-  
ջողիլ երկրորդին փորձին մէջ ։ Եւ եթէ  
որեւէ մէկը չօրհնուած ջուր թափէ գե-  
տին մէջ, ան պիտի ընկլմէ զայն, և այդ  
ընզը սեւ քար պիտի գառնայ ։ Այս-  
պէս ըսելով Ոսկեգետի թագաւորը ետ-  
գարձաւ և հանդարտորէն քալեց գէպի կ-  
եղբոնը հալոցի ամենասաստիկ բոցե-  
րուն ։ Անոր երեսյթը կարմիր, ճերմակ  
փայլուն, թափանցիկ, ակնախտիզ ։ զօ-

րաւոր լոյսի փայլ մը ։ Եղաւ, եղաւ,  
դողաց ու անհետացաւ ։ Ոսկեգետի թա-  
գաւորը շոգիացած էր ։

“Օ՛հ,“ գուեց խեղճ Բարեբախտ, ծիս-  
նելոյն ի վեր անոր ետեէն նայելով,  
“վայ, վայ թասս, թասս, վայ թասս,“



#### ԳԼՈՒԽ Գ .

Թէ ի՞նչպէս Պռն . Օհան արշաւ մը յրաւ  
դեպ Ոսկեգետը եւ թէ հոհ ի՞նչ պատմեցաւ անոր։

Ոսկեգետի թագաւորը հազիւ ըրած  
էր այն ելքը զոր պատմեցինք նախորդ  
գլուխին մէջ և ահա Օհան և Սեւուկ  
մեծ աղմուկով տուն եկան չարաչար  
գինով ։ Երբ իմացան թէ իրենց այդ վեր-  
ջին անօթը բոլորովին կորսուած էր՝ ա-  
սոր արդիւնքը այն եղաւ որ իրենց գի-  
նովութենէն զգաստացան և Բարեբախտի  
վրան իյնալով քառորդ ժամ մը շարու-  
նակարար ծեծեցին զայն ։ Այդ ժամա-  
նակին անցնելէն ետքն ալ ինկան մէյ-  
մէկ աթոռներու մէջ և հասկնալ ուզե-  
ցին թէ ի՞նչ պիտի ըսէր ան ինքինքը  
արդարացնելու համար ։ Բարեբախտ

պատմեց անոնց բոլոր իր պատմութիւնը, որուն մէկ բառին իսկ չհաւատացին բնականաբար։ Նորէն ծեծեցին զայն՝ մինչև որ ալ թեւերնին յոդնեցաւ և դանդաշելով իրենց անկողինը մտան։ Առառն, սակայն, այն յամառութիւնը որով կը պնդէր ան իր պատմութեան վրայ, աստիճան մը վստահութիւն շահեցուց անոր. ատոր ալ անմիջական արդիւնքը սա եղաւ որ երկու եզրայրները, այս կոճռոտ հարցին վրայ բաւական վիճելէ ետքը, այսինքն թէ Ո՛վ առաջին անդամ պիտի փորձէր իր բախտը, իրենց սուրերը քաշեցին և կոռւիլ սկսան։ Կոփեին աղմուկը սարսափեցուց դրացիները, որոնք հասկնալով թէ իւրենք պիտի չկարենան հանդարտեցնել կոռուղները՝ սստիկան մը կանչեցին։

Երբ այս լսեցին՝ Օհան փախչիլ փորձեց և պահուըտեցաւ, բայց Սեւուկ դատաւորին առջև տարուեցաւ և անդորրութիւնը վրդովելուն համար տուգանքի դատապարտուեցաւ, և որովհետեւ առջի իրիկուն մինչև վերջին տամնոցը արբենալու համար վատնած էր՝ տու-

դանքը չկրցաւ վճարել և բանտ դրուեցաւ մինչև որ վճարէ։

Երբ Օհան լսեց զայս՝ շատ ուրախացաւ և անմիջապէս դէպ Ոսկեդատ արշաւ մը ընել որոշեց։ Ի՞նչպէս պիտի կարենար օրհնեալ ջուր դտնել՝ ահա այդ էր խնդիրը։ Քահանային դնաց, բայց ան այդպիսի ինկած նկարագիրով մարդու մը օրհնեալ ջուր չէր կրնար տալ։ Այդ պատճառով Օհան կեանքին մէջ առաջին անդամ ըլլալով իրիկուան ժամերգութեան դնաց և օրհնեալ ջուրով խաչակնքուելու պատրուակով դաւաթ մը ջուր գողցաւ և յաղթականօրէն տուն դարձաւ։

Յաշորդ առտուն արեւծագէն առաջելաւ օրհնեալ ջուրը ամուր շիշի մը մէջ դրաւ, հետք սակառի մը մէջ առնելով նաև երկու շիշ գինի և կերակուր՝ կրոնակը առաւ զանոնք, ձեռքն ալ ալպեան ցուպ մը առնելով դէպ ի լեռ ճամբայելաւ։

Քաղաքէն դուրս ելլելու ատեն ճամբու վրայ բանտին առջեւէն անցնիլ պէտք էր, և երբ պատուհանէն ներս նա-

յեցաւ՝ ո՛վ տեսնէր աղէկ. — Սեւուկը  
որ պատուհանին երկաթ ձողերուն եւ<sup>2</sup>  
տեւէն տիսրութեամբ դուրս կը նայէր :  
«Բարի լոյս, եղբայր,» ըստ 0հան,  
«Ոսկեգետի թագաւորին զրկելիք լուր  
մը ունի՞ս :»

Սեռուկ ակռաները կրծտեցուց զայ-  
րոյթով և երկաթեայ ձողերը ցնցեց  
իր բոլոր ուժով. բայց 0հան անոր վրայ  
խնդաց միայն և պատուիրելով որ մին-  
չե իր դարձը հանդիստ ընէ հոն՝ սա-  
կառը կռնակը առաւ, Սեւուկի դէմ  
շարժեց օրհնեալ ջուրի շիշը՝ մէջը փըր-  
փրեցնելու աստիճան, և իրը աշխարհիս  
ամէնէն երջանիկ մարդը ճամբան շա-  
րունակեց :

Եւ իրապէս ալ այդ առտուն այն-  
պիսի առտու մըն էր որ որեէ մէկը  
կընար երջանիկ ընել, մինչե անդամ եթէ  
մարդս վնատուելիք Ոսկեգետ իսկ չունե-  
նար : Հովիտին վրայ ցօղաթուրմ մշուշի  
տափարակ խաւեր կ'երկարէին, որոնց  
մէջէն վեր կը ցցուէին վիթխարի լեռ-  
ները — անոնց վարի գերբուկները, գորշ  
ստուերներու մէջ, հաղիւ զանազանելի

էին այդ տարածուն մշուշէն, բայց բարձ-  
րագոյն կատարները աստիճանաբար կը  
բարձրանային մինչե արեալոյնը, որ ան-  
կիւնաւոր ձեզքերու մէջէն կարմրագոյն  
սուր հպումներով կը զարնէր անոնց, և  
հորիզոնական ճառագայթներով կը թա-  
փանցէր անոնց նիզակաձև մայրիէ եղե-  
րածովերուն մէջէն : Աւելի վերերը կը  
ցցուէին շերտաւորուած աշտարակաձև  
ժայռերու կոյտեր, որոնք երեւակայական  
բիւրաւոր ձեւերով ատամնաձև հերձու-  
տած էին, և հոն հոն արեւալոյսէն փայ-  
լող ձիւնաշերտ մը անոնց անդունդնե-  
րէն վար կ'երկարէր՝ կայծակի ծուռու-  
մուռ գիծի մը պէս . իսկ այդ բոլորէն  
աւելի վեր առաւտառեան ամպերէն աւե-  
լի տմոյն, բայց մաքուր ու անփոփոխ,  
յաւիտենական ու ձիւնապատ կատար-  
ները կը ցցուէին երկնակապային մէջ :

Ոսկեգետը, որ վարի անձիւն սարեւ-  
րուն մէկէն կը բղխէր, հիմա ստուերի  
մէջ էր գրեթէ բոլորովին, ի բաց առեալ  
գէպի վեր բարձրացող ջրափոշին, որ  
գանդաղ մուխի մը պէս կը վերնար  
ջրվէժին եղերաժայռերէն վեր և թեթև

գալարներու պէս կը տատանէր առաւ-  
ւոտեան հովին վրայ :

Օհանի աչքերը և մտածութները մի-  
այն ու միայն այդ առարկային վրայ  
սեւեռուած էին։ Մոռնալով այն միջոցը  
զոր անցնելու էր՝ անխորհուրդ գնաց-  
քով մը ան այնչափ մը քալեց որ չա-  
րաչար յոդնեցաւ երբ դեռ ստորին կա-  
նանչապատ բլուրներուն դադաթը ելած  
չէր տակաւին։ Բայց երբ հոն ելաւ, շատ  
զարմացաւ իր եւ Ոսկեգետի ակնազբիւրին  
միջեւ տեսնելով սառնալեռներ, որոնց  
մասին՝ հակառակ այդ լեռներուն վրայ  
նախապէս ունեցած ծանօթութեան՝ բո-  
լորովին տղէտ էր։ Վարժ լեռնականի մը  
քաջարտութեամբ թէեւ անոր վրայէն  
վեր մագլցեցաւ, բայց նորէն ալ կը խոր-  
հէր թէ այդպիսի զարմանալի և նոյն  
ատեն վտանգաւոր սառնալեռ մը երբեք  
անցած չէր։

Սառը շատ սահեցուցիչ էր, և անոր  
անդնդային խորութիւններէն խուժով  
ջուրերու սոսկալի ձայներ կը լսուէին,  
որոնք միօրինակ և ցած չէին, այլ փո-  
փոխական և բարձր, երբեմն վայրի մե-

ղեղիի մը սաստկութեամբ, երբեմն ալ  
կարճ ու մելամաղձոտ եղանակներու  
մեղմութեամբ, կամ յանկարծական ճի-  
չերու պէս, որ վիշտի և յուսահասու-  
թեան մէջ գտնուող մարդու մը ձայնին  
կը նմանէին։ Սառը հազարաւոր խառն ի  
խուռն ձեւերով կոտրտած էր։ Բայց  
Օհան կը խորհէր թէ անոնցմէ ոչ մէկը  
սառի սովորական շերտերու կը նմանէր։  
Անոնց բոլոր ուրուագիծներուն մէջ զար-  
մանալի արտայացտուրիւն մը — մարդկա-  
յին նմանութեան խառնշտկուած, ծաղ-  
րական տեւական նմանութիւնն մը կար։  
Բիւրաւոր պատրող ստուերներ, տմոյն  
լոյսեր կը տատանէին այդ տժգոյն կա-  
պոյտ աշտարակիկներու մէջէն ու միջև  
և ճամբորդին նայուածքը կը խողեցնէին  
ու կը շուարեցնէին, մինչ անոր ականջ-  
ները կը խուլնային և գլխու պտոյտ կ'ու-  
նենար սառերու ներքեւէն վազող ջուրե-  
րու շարունակական գոռութներուն պատ-  
ճառով։ Այս ցաւառիթ պարագաները ա-  
ւելի կը ծանրանային անոր վրայ քանի՛ յա-  
ռաջանար։ Սառը անոր շուրջը կը ճաթըռ-  
տէր և նոր անդունդներ կը բանար

սոտքերուն տակ : Դողդղացող սառեւ աշ-  
տարակիկներ կը շարժէին անոր շուրջը  
և որոտալիր կ'իյնային անոր ճամբուն  
վրայ թէե ան յածախակի դիմագրաւած-  
էր այս վտանգները սոսկալի սառնալեռ-  
ներու վրայ, գէշ օդերով, բայց նորէն  
ալ սարսափի նոր ու ճնշով զգացումով  
մըն էր որ վերջին ճեղքին վրայէն ալ  
ցատկեց խոնչած ու դողդոյ, և ինքին-  
քը գտաւ լերան հաստատ մարդագետ-  
նին վրայ :

Ան ստիպուած էր ետ ձգել կերա-  
կուրի սակառը, որ վտանգաւոր ու նե-  
ղիչ բեռ մը եղած էր իրեն, սառնալե-  
ռին վրայ, և հիմա ուրիշ միջոց մը չու-  
նէր զովանալու եթէ ոչ սառը կոտրել և  
ուտել անկէ : Այս բաւական մարեց ա-  
նոր ծարաւը. ժամուան մը հանգիստն  
ալ անոր դիմացկուն կազմին ոյժը վե-  
րագրածուց և ագահութեան անընկճելի  
ոգիով մը իր աշխատալից ճամբորդու-  
թիւնը վերսկսաւ :

Հիմա անոր ճամբան ուղղակի վեր  
կ'ելլէր լերկ և կարմրագոյն ժայռերով  
գագաթէ մը, որուն վրայ սոտքը հան

չեցնելու ծիղ մը կանանչ չկար, ոչ ալ  
փռբրիկ խորշ մը որուն շուրբին մէջ կա-  
րելի ըլլար պատսպարուիլ հարաւային  
արեւէն : Կէսօրը քիչ մը անցած էր և ա-  
րեւին ճառագայթները ուղղակի կը զար-  
նէին գերբուկ ճամբային վրայ, մինչ բո-  
լոր մթնոլորտը անշարժ էր ու սոսկալի  
տաք : Շատ չանցած սաստիկ ծարաւն ալ  
աւելցաւ մարմնական յոգնութեան,  
որմէ կը նեղուէր հիմա 0հան : Յաճա-  
խակի նայուածքներ կը նետէր մէջքէն  
կախուած ջուրի շիշին : «Երեք կաթիլը  
կը բաւէ,» խորհեցաւ ան վերջապէս, «գո-  
նէ շրթունքս կրնամ զովացնել անով :»

Շիշը բացաւ և զայն բերանը կը վեր-  
ցընէր երբ քովի ժայռին վրայ կեցող ա-  
ռարկայ մը հանգիպեցաւ աչքին . կար-  
ծեց թէ կը շարժէր ան : Փոքը շուն մըն  
էր ան, որ երեւութապէս ծարաւէ մեռ-  
նելու վերջին տաղնապով կը տառա-  
պէր : Լեզուն դուրս կախուած և բերա-  
նը չորցած էր, և անդամները տարած-  
ուած էին անկենդան և շրթունքին  
ու կոկորդին վրայ սեւ մըջիւննե-  
րու խումբ մը լեցուած էր : Ան աչքերը

ուղղեց այն շիշին զոր 0հան բռնած էր  
ձեռքին մէջ։ 0հան միշ վերցուց, ջուրէն  
խմեց, ստրով կից մը առւաւ կենդաշ  
նիին և անցաւ։ թէեւ չգիտցաւ թէ  
ի՞նչպէս՝ բայց կարծեց թէ տարօրինակ  
ստուեր մը յանկարծ եկած էր կապոյտ  
երկինքին վրայ։

Ճամբան ամէն վայրկեան աւելի ցից  
ու դերբուկ կ'ըլլար. և այդ բարձր լեւ  
րան օդը զինքը աւելի զովացնելու տեղ  
կարծես անոր արիւնը կ'եռացնէր։ Սա  
րին ջրվէժներուն ճայները անոր ականջ-  
ներուն հեղնանքի պէս կու դային։ ա-  
նոնք շատ հեռու էին և իր ծարաւը ա-  
մէն վայրկեան աւելի կը սաստկանար։  
Ժամ մըն ալ անցաւ ու նորէն քովին  
կախուած շիշին նայիլ սկսաւ. շիշ կէս  
եղած էր, բայց մէջը երեք կաթիլէ շատ  
աւելի կար դեռ։ Զայն նորէն բանալու  
համար կեցաւ, և մինչ բանալու կ'աշ-  
խատէր՝ իրմէ վեր, ճամբուն վրայ, բան  
մը շարժեցաւ։ Ան գեղեցիկ մանուկ մըն  
էր և գրեթէ անկենդան կը պառկէր  
գետնին ժայռին վրայ, ճարաւէն կուրծ-  
քը կ'ուռեր, աչքերը դոց էին և շուր-

թերը կ'այրէին, կը տոշորուէին։ 0հան  
անոր նայեցաւ ուշադիր, խմեց, ու ան-  
ցաւ։ Մութ գորշ ամպ մը եկաւ արեւին  
վրայ և երկար օձաձեւ ստուերներ եր-  
կարեցան լերան քովին ի վեր։ 0հան դեռ  
կը շարունակէր ելլել։ Արեւը մարը կը  
մտնէր, բայց կարծես անոր խոնարհիլը  
զովութիւն չէր բերեր. այդ ծանր օդին  
կապարեայ ծանրութիւնը անոր ճակտին  
ու սրտին վրայ կը ճնշէր, բայց նպա-  
տակակէտը մօտ էր։ Ուկեղեաի ջր-  
վէժը տեսաւ որ բլրակողէն կը բղխէր,  
իրմէ հազիւ 500 ստք բարձրէն։ Վայր-  
կեան մը կեցաւ շունչ առնելու համար,  
և իր գործը դլուխ հանելու համար նո-  
րէն փութաց։

Այդ պահուն տկար աղաղակ մը հա-  
սաւ անոր ականջը։ Դարձաւ և ժայռե-  
րուն վրայ տարածուած տեսաւ ճերմակ  
մազենով ծերունի մը։ Անոր աչքերը  
փոսը ինկած էին, գէմքը մահուան  
տժգունութիւնը ունէր, և յուսահատա-  
կան արտայայտութիւն մը կը տիրէր ա-  
նոր վրայ։ “Զո՞ւր, ” ըստ ան մեղմա-  
ճայն, թեւերը 0հանի երկարելով, “չո՞ւր,  
կը մեռնիմ կոր։”

“Զուր չունիմ, „պատասխանեց Օհան, “կեանքէն քու բաժինդ արդէն առած ես դուն : „Գետինը տարածուած մարմինին վրայէն ցատկելով յառաջ սուրաց: Արեւելքէն կայծակի փայլատակում մը եղաւ և սուրի ձեւ մը առաւ. Երեք անգամ շարժեցաւ բոլոր երկինքին վրայ և զայն մթնցուց ծանր ու անթափանց մուալլով մը: Արեւը մարը կը մտնէր. ան դէպ ի հորիզոնը խորասուղուեցաւ բոցավառ շանթի մը պէս :

Ոսկեգետի որոտումը Օհանի ա'լ աւելի լսելի եղաւ: Կեցաւ եզրը այն կիրճին, որմէ կը վազէր գետը: Անոր ալիքները մայրամուտ արեւին բռոսոր փառքով ողողուած էին: Անոնք իրենց կատարները կրակէ լեզուներու պէս կը ճօճէին, և անոնց փրփուրներուն վրայ արենագոյն լոյսի ցոլքեր կը փայլէին: Անոնց ձայները անոր ականչին ա'լ աւելի հզօր կու գային: Գլխու պտոյտ կ'ունենար այդ երկարող որոտումէն: Դուզալով քաշեց հանեց միշտ իր մէջքէն և զայն նետեց հոսանքին կեղծոնը: Մինչ այդպէս կ'ընէր՝ սառ ցուրտ մը զդաց

անդամներուն մէջ, դանդաչեց, ճիչ մը արձակեց և ինկաւ: Զուրերը անոր աղաղակը թաղեցին: Եւ գետին ողբը կատաղորէն բարձրացաւ գիշերին մէջ, մինչ ան յորդելով կը ծածկէր

ՍԵՒ ՔԱՐԵ:

ԳԼՈՒԽ Դ.

Թէ ի՞նչպէս Պրմ. Սեւուկ արշաւ մը ըրատ դէպ Ռակեգետը եւ թէ հոն ի՞նչ պատահեցաւ անոր:

Խեղճ փոքրիկ Բարեբախտ մտահոգ և տունին մէջ միսմինակ սպասեց Օհանի վերադարձին: Երբ տեսաւ թէ վերադարձած չունի, շատ վախցաւ և գնաց բանտին մէջ Սեւուկի պատեց բոլոր պատահածները: Այն ատեն Սեւուկ շատ գոհ եղաւ և ըստ թէ անտարակոյս Օհան սև քար եղած էր և թէ բոլոր ոսկին միայն ինք պիտի կրնար ձեռք անցնել իր անձին համար: Բայց Բարեբախտ շատ վիշտ զգաց և բոլոր գիշերը լացաւ: Երբ տատուն արթնցաւ՝ տունին մէջ ոչ հաց մնացած էր, ոչ ալ դրամ: այս պատճառով Բարեբախտ ուրիշ ոս-

կերիչի մը քով գնաց վարձքով գործեւ-  
լու համար, և այնչափ շատ, ամէն օր  
այնքան երկար ժամեւ և աղէկ դործեց  
որ շատ շանցած եղբօրը տուգանքը  
վճարելու շափ դրամ շահեցաւ։ Յետոյ  
գնաց և այդ բոլոր դրամն Սեռուկի տուաւ  
և Սեռուկ բանտէն աղատուեցաւ։ Այն  
առեն Սեռուկ շատ ուզախ էր և ըստ  
թէ իրեն ալ պիտի տայ դետին ոսկիէն  
մաս մը։ Բայց Բարեբախտ միայն կա-  
զաչէր որ երթայ ու տեսնէ թէ ի՞նչ  
պատահած է Օհանի։

Արդ, երբ Սեռուկ լսեց թէ Օհան  
օրհնեալ ջուրը գողցած էր՝ ինքնիրեն  
խորհեցաւ թէ այդպիսի դէպք մը կրնայ  
ըլլալ որ շիտակ համարուի Ոսկեգետի  
Թագաւորին կողմէ, և որոշեց գործը  
աւելի պատշաճ կերպով մը կարգադ-  
րել։ Այսպէս Բարեբախտի դրամէն քիչ  
մըն ալ առաւ և չար քահանայի մը դի-  
մեց, որ շատ յօժարութեամբ տուաւ  
իրեն քիչ մը օրհնեալ ջուր։ Այն առեն  
Սեռուկ շատ ապահով զգաց թէ ամէն  
բան աղէկ կարգադրուած էր։ Առաջուն  
կանուխ, արեւծադէն առաջ արթնցաւ,

սակառին մէջ քիչ մը հայ ու դիմի ա-  
ռաւ, օրհնեալ ջուրն ալ դրու շիշի մը  
մէջ, և դէպի լիո ճամբայ ելաւ։ Իր  
եղբօր պէս ան ալ շատ զարմացաւ սառ-  
նալեալ տեսնելով, և շատ գժուարու-  
թին ունեցաւ անկէ անցնելու համար,  
մինչև իսկ իր սակառը ձգելով։ Այդ-  
օրը անամպ օր մըն էր թէե, բայց պայ-  
ծառ օդ մը էր, ծանը, ծիրանեղոն մա-  
ռախուզ մը կը կախուէր երկինքին վրայ  
և բլուրները ամպամած ու տիտր կ'ե-  
րեւային։ Երբ Սեռուկ ցից ու գերաւիկ  
այդ ժայռուաէն վեր կը մագլցէր, ինք  
ալ ծարաւիլ սկսաւ, ինչ որ եղած էր  
իր եղբօր, մինչև որ ինքն ալ շիշը բե-  
րանը վերցուց խմելու համար։ Այն ա-  
ռեն տեսաւ այն գեղեցիկ մանուկը որ  
իրեն մօտ ժայռերուն վրայ կը պատկէր,  
կ'աղաղակէր իրեն, և ջուրի համար կը  
հեծէր։

«Ճո՛ւր, իրաւ որ,» ըստ Սեռուկ, «Կո  
ինձի պէտք եղածին կէսը իսկ չունիմ,»  
և յառաջ քալեց։ Մինչ կը յառաջանար  
արեւին ճառագայթները աւելի աղօտ  
տեսնել կը կարծէր, և ու ամպակոյտի

մը Արեւմուտքէն բարձրանալը տեսաւ Երբ ժամ մըն ալ մադլցեցաւ՝ ծարաւը յաղթեց անոր և փափաքեցաւ խմել։ Այն ատեն տեսաւ ծերունին որ իր առջև ճամբուն վրայ կը պառկէր և լսեց անոր ջուր աղաղակելը։ “Ճո՞ւր, իրաւոր,, ըստ Սեռուկ, “Իս ինձի պէտք եղածին կէսը իսկ չունիմ,, և յառաջ քալեց։

Այն ատեն նորէն աշքերուն առջեւէն լոյսին աղօտանալը նշմարեց, վեր նայեցաւ, և ահա արենագոյն մշուշ մը եկած էր արեւին վրայ։ Սև ամպակոյտն ա՛լ աւելի վեր բարձրացած էր և անոր ծայրերը կը տատանէին ու իրարու կը զարնուէին՝ փոթորկալի ծովի մը ալիքներուն որէս։ Անսնը երկար ստուերներ կը ձգէին որոնք կը դողդզային Սեռուկի ճամբուն վրայ։

Յետոյ Սեռուկ ժամ մըն ալ մադլցեցաւ, և նորէն ծարաւ զգաց։ Երբ շիշ շուրթերուն կը վերցնէր՝ տեսնել կարծեց իր 0հան եղբայրը, որ ճամբուն վրայ իր առջև պառկած էր ուժասպառ, և մինչ կը նայէր՝ երեւոյթը թեւերը

կ'երկարէր իրեն և ջուր կը խնդրէր։ «Հա, հա,» խնդաց Սեռուկ, “հո՞դ ես, բանտի պատուհանին երկաթ ձողերը յիշէ, մարդուկու Զո՞ւր, իրաւ է, կը կարծե՞ս թէ ջուրը մինչև հսո քեզի համար բերի։» Եւ ցատկեց երեւոյթին վրայէն։ Նորէն ալ, մինչ կ'անցնէր, երեւոյթին շուրթերուն վրայ ծաղրանքի դաժան արտայայտութիւն մը տեսնել կարծեց։ Երբ քանի մը կանդուն առաջ անցաւ ետեւը նայեցաւ, բայց երեւոյթը հոնչէր։

Սեռուկի վրայ յանկարծական սոսկում մը եկաւ, և չէր դիտեր թէ ինչո՞ւ։ Բայց ոսկիի ծարաւը աւելի տիրեց իր վրայ և յառաջ սուրաց։ Սև ամպակոյտը զենիթը բարձրացաւ և անկէ կայծակի ոլորուն ժայթքումներ փրթան, և մթութեան ալիքներ անոնց փայլատակումներուն միջև կարծես բոլոր երկինքին վրայ կը դիզուէին ու կը ճօճէին։ Երկինքին այն կողմը, ուրկէ արեւ մարը կը մտնէր, շատ հարթ էր արիւնի լիճի մը պէս, և այդ երկինքին զօրաւոր հով մը փրթաւ՝ անոր կարմիր ամպերը կտոր ընելով և զանոնիք դէպի հեռաւոր մթութիւնը ցրուելով։ Այն ատեն

Սեռուկ կը կենար Ռոկեգետի Եղբը. անոր  
ալիքները կայծակնարեր ամպերու պէս  
սև էին, բայց անոնց փրփռւրները կրակի  
պէս էին, և մինչ ան իր շիշը գետը կը  
նետէր՝ վարի ջուրերուն դուռումը և  
վերի որոտումը իրարու խառնուեցան։  
Ան այս դործը կատարելու առեն կայ-  
ծակը աչքերը կուրցնելու աստիճան շո-  
ղաց, գետինը ստքերուն տակէն տեղի  
տուաւ, և ջուրերը անոր աղաղակը թաշ-  
ղեցին եւ գետին ողբը կատաղօրէն  
բարձրացաւ գիշերին մէջ, մինչ ան յոր-  
դելով կը ծածկէր

### ԵՐԿՈՒ ՍԵՒ ՔԱՐԵԲԸ։

#### ԳԼՈՒԽ Ե.

Թէ ի՞նչպէս փոքրիկն Բարերախտ արշաւ մը  
դրա դեպ մնիկելու և թէ ինձ ի՞նչ պատահեցաւ  
անոր. որիշ հետարքական դեսպէր։

Երբ Բարեբախտ տեսաւ թէ Սեռուկ  
չվերադարձաւ՝ շատ վիշտ զգոց և չէր  
գիտեր թէ ի՞նչ ընէ։ Դրամ չունէր և  
անոր համար ստիպուած էր նորէն եր-  
թալ և վարձքով գործել այն սակերի-  
չին քով, որ զինքը չարաշար կ'աշխատ-  
ցնէր և շատ քիչ գրամ կու տար։ Մէկ  
երկու տեիս ետքը Բարեբախտ յոգնե-

ցաւ ու միտքը գրաւ ինք ալ Ռոկեգետ  
երթալ և բախտը փորձել։ «Փոքրիկ թա-  
գաւորը ազնիւ կ'երժւար,» խորհեցաւ  
ան։ «Չեմ կարծեր որ ան զիս սև քար  
դարձնէ։» Այսպէս, դնաց քահանային, որ  
ուզելուն պէս քիչ մը օրհնեալ ջուր  
տուաւ անոր։ Այն ատեն Բարեբախտ  
քիչ մը հաց առաւ իր սակառին մէջ,  
ինչպէս նաև ջուրի շիշը, և առտուն շատ  
կանուկս ճամբայ ելաւ գէպի լեռները։

Եթէ սառհալենը մեծ յոգնութիւն  
պատճառած էր իր եղբայրներուն՝ իրեն  
քսան անդամ աւելի գէշ էր այդ բանը,  
իրեն որ ոչ զօրաւոր էր, ոչ ալ լեռ  
մագլցելու վարժ։ Քանի մը անդամ  
գէշ անկումներ ունեցաւ, սակառը և  
հացը կորմնցուց, և շատ վախցաւ սառե-  
րուն տակէն լսուող տարօրինակ ձայնե-  
րէն։ Երկար տուեն կահանչուտին վրայ  
պառկեցաւ հանդշելու համար՝ երբ ան-  
ցած էր սառնալենը, և սկսաւ գագաթն  
ի վեր մագլցիլ օրուան ամէնէն տաք  
ժամուն։ Երբ ժամ մը վեր ելաւ, սոս-  
կալիօրէն ծարաւցաւ, և իր եղբայրնե-  
րուն ըրածին պէս ինք ալ ջուրը խմելու

— 60 —

սլիտի սկսէր՝ երբ տեսաւ ծերունի մը  
որ իրմէ վեր գտնուող ճամբէն կու  
դար. ծերունին շատ տկար կ'երեւար և  
ձեռքի ցուպին կը կոթնէր. «Զաւակս»  
ըսաւ ծերունին, «Ճարաւէս կը մեռնիմ,  
այդ ջուրէդ քիչ մը տուր խնծի» Այն  
ատեն Բարեբախտ անոր նայեցաւ և երբ  
զայն տժգոյն ու պարտասուն տեսաւ,  
ջուրը տուաւ որ խմէ, և ըսաւ, «Միայն  
թէ կը խնդրեմ որ բոլորը չմտէք»  
Բայց ծերունին բաւական շատ խմեց և շիւ  
շը վերադարձուց անոր՝ երկու երրորդը  
պարապէ Յետոյ անոր բարի յաջողութիւն  
մազթեց և Բարեբախտ զուարթաբար յաշ  
ուաշ քալեց. Ճամբան աւելի դիւրին կու  
դար անոր ոտքերուն և երկու կամ  
երեք ծիլեր երեւցան ճամբուն վրայ. քովին  
ափերուն վրայ քանի մը մարախներ երա-  
գել սկսան և Բարեբախտ կը խորհէր  
թէ այդպիսի զուարթ երդ մը բնաւ  
լսած չէր:

Յետոյ մէկ ժամ ալ յառաջ քալեց և  
ծարաւը բաւական աւելցաւ, այնպէս որ  
կը կարծէր թէ ջուրը խմել պիտի  
ստիպուէր. Բայց երբ ջուր խմելու հաշ-

մար շիշը վեր վերցուց՝ տեսաւ փոքրիկ  
մանուկ մը որ ճամբուն վրայ պառկած  
կը հեւար, և սրտառուչ կերպով կու  
լար ջուրի համար. Բարեբախտ ինքզինքին  
հետ մաքառեցաւ, և ծարաւի քիչ մը  
աւելի համբերել որոշեց. շիշը մանու-  
կին շուրթերուն մօտեցուց և ան մինչեւ  
քանի մը կաթիլ մնալը խմեց անկէ: Մա-  
նուկը երբ խմեց՝ Բարեբախտի ժպտե-  
ցաւ, ոտքի ելաւ և բլուրնի վար վա-  
զեց, և Բարեբախտ անոր ետեւէն նա-  
յեցաւ մինչև որ ան փոքր աստղի մը  
չափ պզտիկ երեւցաւ: Յետոյ դարձաւ  
և նորէն մագլցիլ սկսաւ. Եւ ահա ամէն  
տեսակ սիրուն ծաղիկներ կը բուսնէին  
ժայռերու վրայ, բաց կանանչ գոյնով  
մամուռներ, բաց վարդագոյն աստղա-  
ծաղիկներ, կակուղ զանգակաւոր բոգեր՝  
երկինքին ամէնէն կապոյտ եղած ժա-  
մանակէն աւելի կապտագոյն, և մաքուր,  
սպիտակ ու թափանցիկ շուշաններ: Բո-  
սոր ու ծիրաներոյն թիթեռնիկներ կը  
թռչտէին հոս հոն, և երկինքը այնչափ  
պայծառ լոյս մը կը ցոլացնէր որ Բա-  
րեբախտ ինքզինքը կեանքին մէջ այդ-  
չափ երշանիկ բնաւ զգացած չէր:

Նորէն, երբ ժամ մըն ալ մագլւշ  
ցեցաւ, ծարաւը սկսու անտանելի ըլլալ,  
և երբ շիշին նայեցաւ՝ անոր մէջ հա-  
զիւ հինդ վեց կաթիլ մնացած տեսաւ,  
և չէր համարձակեր զայն խմել։ Բայց  
ճիշտ այն ատեն երբ շիշը նորէն մէջըը  
կը կախէր, ժայռերուն վլայ պառկած  
փոքր շուն մը տեսաւ որ շունչ առնե-  
լու համար կը հետար — ճիշտ այնպէս  
ինչպէս տեսած էր զայն 0հան իր ելլելու  
օրը։ Բարեբախտ կեցաւ և անոր նայե-  
ցաւ ու յետոյ ալ Ոսկեդետին՝ որ հա-  
զիւ հինդ հարիւր կանդուն բարձր էր  
իրմէ. յիշեց նաև գաճաճին խօսքը, «Թէ  
ոչ ոք կրնայ յաջողիլ երբ չէ յաջողած  
առաջինին փորձին մէջ» Փորձեց շունը  
թողուլ անցնիլ, բայց ան ցաւագին  
կերպով կը հեծէր. նորէն կեցաւ:  
«Խեղճ կենդանի», ըստ Բարեբախտ,  
«Եթէ իրեն չօգնեմ մինչեւ իմ վերա-  
դարձս արդէն մեռած պիտի ըլլայ»  
Յետոյ անոր աւելի ուշադրութեամբ նա-  
յեցաւ և անոր աչքերը այնչափ ցաւա-  
լի կերպով դարձան իրեն որ չկրցաւ  
դիմանալ։ «Խերը անիծեմ թագաւորին

ալ, ոսկիին ալ», ըստ Բարեբախտ, եւ  
բացաւ շիշը, եւ բոլոր ջուրը շունին բե-  
րանը թափեց։

Շունը վեր ցատկեց և իր ետեւի  
ոտքերուն վրայ կեցաւ։ Անոր պոչը ան-  
հետացաւ, ականջները երկար, աւելի  
երկար, մետաքսանման ու ոսկեզէն եղան.  
քիթը աւելի կարմրեցաւ, աչքերը աւե-  
լի փայլեցան, երեք երկվայրկեանի մէջ  
շունը անցաւ և Բարեբախտի առջեւ  
կեցաւ հին ծանօթ մը, Ոսկեդետի թա-  
գաւորը։

«Ենորհակալ եմ», ըստ թաղաւորը,  
«բայց մի վախնար. բան մը չկայ», որով-  
հետեւ Բարեբախտ իր վերջին դիտո-  
վութեան արուած այս անակնկալ պա-  
տասխանին պատճառով սարսափի յայտ-  
նի նշաններ կը ցուցինէր։ «Ինչո՞ւ համար  
առաջ դուն չեկար», հարցուց գաճաճը,  
«փոխանակ զբկելու այդ քու սրիկայ  
եղբայրներդ զորոնք քար դարձնելու  
նեղութիւնը պատճառեցիր ինծի։ Շատ  
ալ կարծր քարեր եղան։»

«Վայ, ի՞նչ կ'ըսէք», ըստ Բարե-  
բախտ, «ուրեմն այդչափ անդո՞ւթ ե-  
ղաք։»

«Անդո՞ւթ,» ըստ գաճաճը, «անոնք չօրհնուած ջուր թափեցին դետիս մէջ. կը կարծե՞ս թէ ես թոյլ պիտի տայի առող ։»

«Բայց ի՞նչպէս,» ըստ Բարեբախտ «վստահ եմ որ . . . Զերդ Վեհափառութիւն, ըսել կ'ուզեմ . . . անոնք ջուրը եւ կեղեցին գաւիթէն առին ։»

«Շատ հաւանական է,» պատասխանեց գաճաճը, «բայց,» և դէմքը շատ խստացաւ մինչ կը խօսէր, «ջուրը որ մերժուած է յոդհածին և մահամերձին՝ օրհնեալ չէ, մինչեւ իսկ երկինքի ամէն մէկ սուրբէն օրհնուած ըլլայ. և ջուրը որ գթութեան անօթին մէջ կը դժնուի՝ ահա այդ օրհնուած է, մինչեւ իսկ պըլծուած ըլլայ դիմակներով ։»

Գաճաճը այսպէս ըսելով ծռեցաւ և փցուց շուշան մը որ ոտքին քով աճած էր : Անոր սպիտակ տերեւներուն վրայ ցողի երեք ջինջ կայլակներ կը կախուեին : Եւ գաճաճը այդ կաթիները Բարեբախտի բռնած շիշին մէջ թափեց : «Ասոնք գետը նետէ,» ըստ ան, «և լեռան միւս կողմէն Գահճի Զորը իջիր : Եւ

հիմա բարի յաջողութիւն կը մաղթեմ քեզի ։»

Մինչ կը խօսէր, գաճաճին երեւոյթը անորոշելի եղաւ : Անոր պատմուճանին փոփոխական դոյները ցողաթուրմ լսյսի պրիսմակային մշուշի մը փոխուեցան . ու պահ մը կեցաւ անոնցմով քօղածածկուած՝ իբր ծխածանի լսյն գօտիով մը : Գոյները տկարացան, մշուշը օդը բարձրացաւ և թագաւորը շոգիացաւ :

Բարեբախտ մինչեւ Ոսկեգետին եզրը մաղլցեցաւ . անոր ալիքները բիւրեղի չափ ջինջ ու յստակ և արեւի պէս փայլուն էին : Երբ ցողի երեք կաթիները գետը նետեց, հոն ուր ինկած էին անոնք, փոքր շըջանակածեւ յորձանք մը գոյացաւ որուն մէջ ջուրերը կ'իջնային երաժշտական ձայնով մը :

Բարեբախտ ատեն մը կեցաւ զայն գիտելով ու շատ վհատած, որովհետեւ ոչ թէ գետը սոկի չդարձաւ միայն, այլ անոր ջուրերը քանակով նուազած կ'երեւային : Նորէն ալ հնազանդեցաւ իր գաճաճ բարեկամին և լեռան միւս կողմի Գահճի Զորը իջաւ. և մինչ կ'երթար,

լսել կը կարծէր ձայնը ջուրի մը որ  
գետնին տակէն իրեն ճամբայ կը բա-  
նար : Հիմա , երբ Գանձի Զորի տեսա-  
րանը կը դիտէր , ահա դետ մը , Ոսկե-  
գետին նման , կը բղխէր Գանձի Զորին  
վերեւը գտնուող ժայռերուն նոր մէկ  
ճեղքէն և անհամար գետակներ ձեւա-  
ցընելով կը վագէր չոր ու անջրդի կարմիր  
աւաղակոյտերու մէջէն :

Մինչ Բարեբախտ կը դիտէր՝ թարմ  
դալարիքներ կը բումնէին գետակներուն  
քովերը և զալարուն տունկեր կ'աճէին  
ու կը ճիւղաւորուէին խոնաւցած հողին  
վրայ : Նորաբոյս ծաղիկներ յանկարծ  
ծաղկիլ սկսան գետափներու երկայնքին  
վրայ ինչպէս աստղեր քթթել կը սկսին  
երբ վերջալոյօր մարմրի , և մրտենիի  
թաւուտներ ու որթատունկի բարունակ-  
ներ երկար ստուերներ կը ձգէին հովի-  
տին վրայ ուր կ'աճէին : Եւ այսպէս  
Գանձի Զորը նորէն պարտէղ մը եղաւ և  
այն ժառանգութիւնը , որ կորսուած էր  
անգթութեան պատճառով , վերստաց-  
ուեցաւ սիրոյ պատճառով :

Եւ Բարեբախտ գնաց ու բնակեցաւ

ՀՀ Ազգային գրադարան



NL0387181

870